

**Միավորված ազգերի կազմակերպության
Անվտանգության խորհրդի «Կանայք,
խաղաղություն և անվտանգություն» N 1325
բանաձևի դրույթների իրականացման 2025-2027
թվականների գործողությունների ազգային երրորդ
ծրագիրը և ծրագրի իրականացման
Ժամանակացույցը հաստատելու մասին**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- --- 2025 թվականի N --L

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
«ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՊՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» N 1325 ԲԱՆԱԶԵՎԻ
ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածով և 153-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-L որոշման N 1 հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի «Արտաքին գործերի նախարարություն» բաժնի 13-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2025-2027 թվականների գործողությունների ազգային երրորդ ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երևան

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2025 թվականի հունիսի... Nորոշման

**ՄԱԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆԱՅԶ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ,
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ 1325 ԲԱՆԱՃԼԻ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՆԵՐԴՐՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԶԱՆԹԵՐԻՆ

1. Համընդհանուր նպատակներ և արժեքներ

1. ՄԱԿ ԱԽ Կանայք, խաղաղություն, անվտանգություն (այսուհետ՝ ԿԽԱ) 1325 բանաձևի իրականացման ՀՀ գործողությունների երրորդ ազգային ծրագիրը (ԳԱԾ), որը կրում է «Ներդրում խաղաղություն ապահովելու համաշխարհային ջանքերին» խորագիրը, վերահաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքական հանձնառությունը և ռազմավարական տեսլականը առաջ մղել խաղաղության օրակարգը, այդ թվում՝ ԿԽԱ հանձնառությունների իրականացման ուղղությամբ:
2. Գործողությունների ազգային երրորդ ծրագիրը, հիմնվելով նախորդ երկու ԳԱԾ-երի արձանագրած ձեռքբերումների և դրանք իրագործելու ընթացքում արված հետևությունների վրա, ապահովում է իրականացված քայլերի շարունակականությունը՝ միաժամանակ արձագանքելով Հայաստանի Հանրապետության ներկայիս մարտահրավերներին ու զարգացման տեսլականին:

3. ՀՀ 2025-2027թթ. գործողությունների երրորդ ազգային ծրագիրը կազմվել է ԱԳՆ համակարգմամբ, հաշվի առնելով ՀՀ ճյուղային բոլոր գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության կողմից տրամադրած տեղեկատվությունն ու առաջարկները: Ծրագրում հաշվի են առնվել նախորդ երկու ԳԱԾ-ի մշտադիտարկման ու գնահատման արդյունքները:
4. Գործողությունների երրորդ ազգային ծրագրի որակական ու քանակական արդյունքային ցուցանիշները բարելավելու նպատակով, այն հարմարեցվել է ՀՀ կառավարության կողմից ընդունված ռազմավարություններին, ՀՀ կողմից վավերացրած միջազգային փաստաթղթերին:
5. ԳԱԾ նպատակն է հասցեագրել առկա մարտահրավերներն ու զարգացման հնարավորությունները, ապահովելով, որ ՀՀ-ում ԿԽԱ օրակարգը շարունակի լինել արդիական, հեռանկարային և իրագործելի:
6. 2023թ.-ին Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի ամբողջական շրջափակումն, այնուհետև դրան սեպտեմբեր ամսին հաջորդած Էթնիկ զտումը, ստեղծել են նոր իրողություն՝ ՀՀ շուրջ 115.000 բռնի տեղահանվածների կարիքների արագ արձագանքման ու աջակցության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն առաջացնելով: Առաջնային են հատկապես խոցելի խմբերի՝ երեխաների, տարեցների, կանանց և աղքիկների խնդիրների հասցեագրումը, ովքեր բռնի տեղահանումից հետո հայտնվել էին ծայրահեղ խոցելի վիճակում:
7. ԿԽԱ երրորդ ազգային ծրագիրն ընդգծում է ԼՂ-ից բռնի տեղահանված կանանց ու աղքիկների խնդիրների հասցեագրման կարևորությունը ու վերահաստատում է ՀՀ հանձնառությունը նրանց իրավունքների ապահովման և կայուն կենսապայմանների ստեղծման հարցում: ԳԱԾ-ն համալիր մոտեցում է ցուցաբերում Հայաստանի սահմանային նոր դինամիկայի հետ կապված անվտանգության հետևանքներին և դրա ազդեցությանը կանանց և աղքիկների վրա:
8. Երրորդ ԳԱԾ-ում առաջնահերթություն են նաև ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորածների հարազատների, որդեկորույս մայրերի, պատերազմի հետևանքով ամուսին կորցրած կանանց, առանց հոր մնացած երեխաների կարիքները:
9. Այն առաջարկում է համապարփակ, գենդերազգային ծրագրեր, որոնք անդրադառնում են ընտանիքներում կանանց հատուկ կարիքներին և դերին, նախատեսում է հոգեբանական, մասնագիտական կարողությունների զարգացման ու այլ բնույթի աջակցություն:
10. ԳԱԾ-ն անդրադառնում է ազգային փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող և մյուս բոլոր խմբերի կանանց կարիքներին՝ որպես ներառականությունն ապահովելու, խաղաղության կառուցմանը հավասար մասնակցությունը խթանելու, հակամարտության ընթացքում և հետհակամարտային շրջանում այս կանանց առջև ծառացած խոցելիությունները հաղթահարելու կարևորագույն գործոններից մեկը, որը հարթում է ճանապարհը դեպի ավելի համախմբված և արդար հասարակություն:
11. 2018 թվականից ի վեր Հայաստանը ակտիվացրել է իր ուշադրությունը ժողովրդավարական բարեփոխումների վրա՝ ստեղծելով նոր հնարավորություններ կանանց իրավունքների առաջխաղացման

համար: Կառավարությունը զգալի քայլեր է ձեռնարկել գենդերային հավասարության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը ամրապնդելու համար, ներառյալ Կանանց, խաղաղության և անվտանգության գործողությունների ազգային ծրագրի իրականացումը:

12. Այսպիսով, ծրագիրը ձգտում է մեծացնել կանանց մասնակցությունը խաղաղության կառուցման և որոշումների կայացման գործընթացներում՝ ճանաչելով նրանց կենսական դերը կայուն խաղաղության և ժողովրդավարության խթանման գործում:

1. ՀՀ փորձն ու ներգրավվածությունը միջազգային հարթակներում

13. 2020–2022թթ. Մարդու իրավունքների խորհրդում ՀՀ անդամության ընթացքում, Հայաստանը կարևորել է ԿԽՍՈՒ օրակարգի ակտիվ իրագործումը:

Այդ ընթացքում շեշտադրվել են կանանց և աղջիկների դերակատարությունը տեղական խաղաղության, անվտանգության, կայուն զարգացման, լավ կառավարման, ատելության խոսքի դեմ պայքարի, հակամարտությունների կարգավորմանն ուղղված բանակցությունների, պատերազմների կանխարգելման, մարդկության դեմ ուղղված հանցագործությունների՝ ցեղասպանության ու էթնիկ զտումների կանխարգելման հարցերում:

14. Հայաստանը՝ որպես զանգվածային ոճրագործությունների դեմ պայքարող երկիր, մեծ կարևորություն է տալիս կանանց և աղջիկների դերակատարությանը ցեղասպանության կանխարգելման օրակարգում:
15. 1325 (2000) բանաձևը և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 10 այլ հարակից բանաձևերը (այսինքն՝ 1820 (2008), 1888 (2008), 1889 (2009), 1960 (2010), 2106 (2013), 2122 (2013), 2242 (2015), 2467 (2019), 2493 (2019) և 2686 (2023)) «հատուկ շեշտում են բոլոր պետությունների պատասխանատվությունը՝ վերջ դնել անպատժելիությանը և քրեական հետապնդման ենթարկել ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների, ատելության խոսքի, ռասիզմի, ռասայական խտրականության, քսենոֆոբիայի, անհանդուրժողականության, սեռական խտրականության և ծայրահեղականության գործողությունների համար պատասխանատուներին, որոնք կարող են նպաստել հակամարտությանը, ինչպես նաև կանանց և աղջիկների նկատմամբ սեռական և այլ բռնություններ իրականացրած հանցագործներին, և ընդգծում են, որ, հնարավորության դեպքում, այդ հանցագործությունները պետք է բացառվեն համաներման դրույթներից»:
16. Կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ սեռական և գենդերային բռնության կանխամտածված գործադրումը որպես գործիք

հակամարտությունների ժամանակ՝ միջազգային իրավունքի և մարդու իրավունքների կոպիտ խախտում է:

17. Նման մարտավարությունները անդառնալի վնաս են հասցնում անհատներին և համայնքներին, հավերժացնում հակամարտության ցիկլը և ավելի ու ավելի հաճախ են ճանաչվում որպես հնարավոր ցեղասպանություն:
18. ԳԱԾ-ն հղում է անում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2686 (2023) ատելության խոսքի վերաբերյալ բանաձևին, որն ընդգծում է բռնության և խտրականության հրահրման դեմ պայքարի հրատապ անհրաժեշտությունը, մասնավորապես՝ հակամարտությունների ընթացքում և հակամարտությունից հետո՝ ճանաչելով ատելության խոսքը որպես սպառնալիք խաղաղությանը, անվտանգությանը և խոցելի բնակչության պաշտպանությանը:

19. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի հիման վրա մշակված 30-րդ ընդհանուր հանձնարարականն ընդլայնում է «ցեղասպանություն» հասկացությունը՝ ներառելով գործողություններ, որոնք ուղղված են կանանց և աղջիկների դեմ՝ ելնելով նրանց սեռից և ինքնությունից:

20. 2024 թվականին Հայաստանը միացավ Հռոմի ստատուտին՝ դառնալով Միջազգային քրեական դատարանի (ICC) լիիրավ անդամ:
21. Հայաստանը նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի շրջանակում ներկայացվող «Ցեղասպանության կանխարգելում» բանաձևի հեղինակն է: Բացի այդ, արդեն 5-րդ անգամ ՀՀ ԱԳ նախարարության համակարգմամբ երևանում կազմակերպվում է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» Գլոբալ ֆորումը, որը վերջին անգամ տեղի է ունեցել 2024 թվականի դեկտեմբերի 12-13-ին և նվիրված է եղել ցեղասպանության վաղ նախազգուշացման ու վաղ արձագանքման թեմային:
22. ԳԱԾ-ը համահունչ է Հայաստանի այլ ազգային ռազմավարություններին՝ ուղղված կանանց և գենդերային հավասարության առաջխաղացմանը՝ ապահովելով մարդկային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումն ու օգտագործումը:
23. ԳԱԾ-ն ընդգրկում է կանանց իրավունքների և գենդերային հավասարության վերաբերյալ Հայաստանի միջազգային պարտավորությունները, ներառյալ նրանք, որոնք երկիրը ստանձնել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի (CEDAW), Պեկինի հռչակագրի և գործողությունների պլատֆորմի, 2030 թվականի Կայուն զարգացման նպատակների, Համընդհանուր պարբերական դիտարկման ընթացակարգի շրջանակում:
24. Հայաստանի ձեռքբերումները գենդերային հավասարության և կանանց իրավունքների առաջխաղացման գործում զգալի առաջընթաց են գրանցել անկախությունից ի վեր: Ու չնայած այն մարտահրավերներին, որոնց ՀՀ-ն բախվել է իր նորանկախ շրջանից մինչ օրս, երկիրը շարունակում է հավատարիմ մնալ ժողովրդավարական բարեփոխումներին, օրենքի գերակայությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը՝ այդ թվում, առաջ մղելով գենդերային հավասարության օրակարգը:

25. Համայնքային առաջնորդության վրա հիմնվելով և խաղաղության կառուցման գործընթացներում կանանց ծայր առաջնահերթ համարելով, ինչպես նաև տարածաշրջանային և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցությունը ընդլայնելով, Հայաստանը միտված է շարունակել իր հաստատուն քայլերը ամրապնդելու համար իր դիրքերը որպես ԿԽԱ սկզբունքներին հավատարիմ, առաջադեմ և նորարար մոտեցում ունեցող երկիր՝ ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում:

26. Երրորդ ԳԱԾ-ն ցույց է տալիս կապը գենդերային անհավասարության և անվտանգության միջև: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ երբ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը կիրառվում է ազգային և միջազգային անվտանգության որոշումների կայացման գործընթացում, այն ավելի հավանական է դարձնում խաղաղության և կայունության հասնելու ջանքերը:

27. ԿԽԱ-ի շրջանակը նպատակ ունի մեծացնել կանանց մասնակցությունը անվտանգությանը վերաբերող որոշումների կայացման ու խաղաղությանը միտված բանակցությունների գործընթացներում, ընդլայնել կանանց աշխատանքային ներուժի դրսևորման հարթակները, պաշտպանել նրանց ցանկացած տեսակի բռնություններից, կանխել հակամարտությունները՝ անդրադառնալով գենդերային անհավասարությանը և ապահովել օգնության և վերականգնման արդյունավետ գործընթացներ հետհակամարտային միջավայրում:

28. Միևնույն ժամանակ, Հայաստանը նշանակալի ջանքեր է գործադրում ամրապնդելու մարդկային անվտանգության քաղաքականությունը նաև անվտանգության ոլորտում, ինչպես նաև ընդլայնելու կանանց ներգրավվածությունը հակամարտությունների լուծման, միջնորդության և մարդկային անվտանգության նախաձեռնությունների մեջ՝ համապատասխանեցնելով այն ֆեմինիստական սկզբունքներին և առաջարկելով խաղաղության ավելի կայուն ուղիներ:

29. ՀՀ-ն կարևոր քաղաքականություն է վարում, ոչ միայն անվտանգության առկա հայեցակարգերի ընդլայնման ուղղությամբ, այլ նաև նախաձեռնողականություն է ցուցաբերում տարածաշրջանում կայունության և խաղաղության հասնելու ուղղությամբ: 30. ՀՀ կառավարության կողմից ներկայացված «Խաղաղության խաչմերուկ» նախագիծը միտված է տարածաշրջանի փոխկապակցվածության խթանմանը՝ հիմնված պետությունների ինքնիշխանության, սեփական տարածքներով անցնող ենթակառուցվածքների նկատմամբ իրավագործության, հավասարության ու փոխադարձության սկզբունքների վրա: Տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակումը և Ադրբեջանի հետ ընթացող սահմանազատման գործընթացի ընդլայնումն իրենցից ենթադրում են սահմանապահ ծառայություն իրականացնողների շեշտակի աճ, որտեղ կանանց ու աղջիկների դերը նույնպես էական նշանակություն է ունենալու:

30. Հայաստանը կարևոր քաղաքականություն է վարում՝ ամրապնդելու մարդու անվտանգության ապահովումը, այդ թվում՝ մեծացնելով կանանց մասնակցությունը հակամարտությունների կարգավորման և միջնորդության նախաձեռնություններում:

31. 2018-ից հետո առավել մեծ ուշադրություն է դարձվել երկրում ժողովրդավարական բարեփոխումներին, ինչը ստեղծել է բացառիկ հնարավորություն՝ ապահովելու կանանց բովանդակային մասնակցությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են դիվանագիտությունը, անվտանգությունը, պաշտպանությունը, ոստիկանությունը, արդարադատությունը:

33. Պետությունը ռազմավարական նշանակություն է տալիս կանանց ներուժի ամբողջական իրականացմանը: Այս համատեքստում երրորդ ԳԱԾ-ն ընդլայնում է մոտեցումը՝ չսահմանափակվելով միայն կանանց թիվը անվտանգության ոլորտում բարձրացնելով:

34. ԳԱԾ-ը հիմնված է ներքին օրենսդրության և միջազգային իրավունքի վրա:

-Լինելով միջազգային տարբեր կազմակերպությունների անդամ ու վավերացնելով մարդու իրավունքներին վերաբերող գրեթե բոլոր հիմնարար փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետությունը միավորում է իր գործադրած ջանքերը համընդհանուր նպատակների հետ և իր ներդրումն է ունենում այնպիսի գլոբալ խնդիրների լուծմանը, ինչպիսիք են՝ տաքացումը, կլիմայի փոփոխությունը, կիբերանվտանգությունը, մարդկանց թրաֆիքինգը, սոցիալական անհավասարության խորացումը և այլ հարցեր, որոնք լուրջ հետևանքներ ունեն կանանց՝ հատկապես խոցելի խմբերի համար՝ միջազգային և ազգային մակարդակներում:

35. ԳԱԾ-ն ներկայացնում է հատուկ ծրագրեր այս խնդիրների լուծման համար՝ կենտրոնանալով գենդերային անհավասարության դեմ պայքարի վրա և որոշումներ կայացնող պաշտոններ զբաղեցնող կանանց թվի մեծացմանն ուղղված ռազմավարություն:

36. ԳԱԾ-ն նախատեսում է ԿԽԱ օրակարգի արդյունավետ տեղայնացման շարունակականությունը: Այն ընդգծում է տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավման կարևորությունը՝ ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու համար: Ամբողջ Հայաստանում կառավարությունը աջակցել է տեղական գործողությունների ծրագրերի (ՏԳԾ) մշակմանը բազմաթիվ համայնքներում՝ պաշտպանելով ԳԱԾ օրակարգի տեղայնացումը:

Այս գործընթացը հատկապես արդյունավետ է եղել սահմանամերձ համայնքներում՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների մեծ ներհուսքի պայմաններում: Այն ծառայել է որպես արժեքավոր գործիք՝ տեղում մարտահրավերները գնահատելու, փախստականների ներառման գործում համայնքների հետ համատեղ աշխատելու և սոցիալական ներգրավվածությունը խթանելու համար:

Բացի այդ, տեղայնացման գործընթացը հնարավորություն է ստեղծել հաղորդակցման ամրապնդման համար համայնքների և պետական այն մարմինների միջև, որոնք պատասխանատու են ԳԱԾ-ի մշակման և իրականացման համար: Սա բարելավել է համակարգումը և հիմք է ստեղծել այս գործընթացների արդյունավետ մշտադիտարկման և գնահատման համար:

• **Հայաստանի մոտեցումը Երրորդ ԳԱԾ-ն մշակելիս**

Ներառականություն

37. Երրորդ ԳԱԾ-ի մշակման աշխատանքներին նախորդել են տեղեկատվության ընդհանրական հավաքագրումը, պետական գերատեսչությունների ու քաղաքացիական հասարակության փոխգործակցությունը: Մասնավորապես, այն ներառել է լայնածավալ խորհրդակցություններ քաղաքացիական հասարակության դերակատարների, համայնքների առաջնորդների, ակտիվիստների, բռնի տեղահանվածների, հաշմանդամություն ունեցող անձանց և փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:
38. ԳԱԾ նախապատրաստական փուլում օգտագործվել է ՀԿ-ների կողմից առաջարկված մանրամասն ու փոխկապակցված մեթոդաբանություն՝ ներառյալ կրթական ծրագրերը, ԿԽԱ ոլորտում նոր միտումների վերաբերյալ վերջին թարմացումները, պետական գործընկերների և համայնքային առաջնորդների հետ քննարկումները, տվյալների հավաքագրումը և համայնքային գնահատումները:

Քաղաքացիական հասարակության հատուկ դերը

39. ԿԽԱ միջգերատեսչական հանձնաժողովի և քաղաքացիական հասարակության համագործակցությունը զգալիորեն աճել է երկրորդ ԳԱԾ-ի ստեղծումից ի վեր: Քաղաքացիական հասարակությունը ոչ միայն հանդես է եկել որպես հավասար գործընկեր ԳԱԾ մշակման և իրականացման գործում, այլ նաև դարձել է դրա իրականացման մշտադիտարկման համար պատասխանատու հանձնաժողովի մաս:
40. Այս համագործակցությունը խորացնելու նպատակով ԳԱԾ-ի համար կիրառվել են մի շարք մասնակցային մեթոդաբանություններ՝ քաղաքացիական հասարակության դերակատարները, համայնքային առաջնորդները և հասարակական կազմակերպությունները երկրի տարբեր մասերից հրավիրվել են իրենց ծրագրերը ներկայացնելու, մտահոգությունները կիսելու և համայնքների կարիքները ներկայացնելու համար:
41. Արդյունավետ երկխոսություն ապահովելու նպատակով կազմակերպվել են հանդիպումներ տարբեր գերատեսչությունների ԿԽԱ հանձնաժողովի անդամների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև, ինչը նպաստել է համագործակցությանն ու ներառականության ապահովմանը:
42. ԳԱԾ արդյունավետ իրականացումը պահանջում է մշտադիտարկման և գնահատման (ՄԳ) շրջանակի ինտեգրում, որը առկա է փաստաթղթի եզրափակիչ մասում: Նման շրջանակն ապահովում է համակարգված

հաշվետվողականություն, հեշտացնում է սահմանված նպատակների համեմատ առաջընթացի գնահատումն ու հնարավորություն է տալիս ճշգրտումներ իրականացնել քաղաքականության մեջ՝ հիմնվելով տվյալների վրա:

43. Մշտադիտարկման և գնահատման արդյունավետ մեխանիզմներ ներդնելով՝ ԳԱԾ-ն ոչ միայն ուժեղացնում է նշված արդյունքներին հասնելու իր կարողությունները, այլ նաև խթանում է նոր մարտահրավերներին արձագանքելու հնարավորությունը՝ դրանով իսկ բարձրացնելով ընդհանուր արդյունավետությունը և երկարաժամկետ կայունությունը:

1. Երրորդ ԳԱԾ-ի ռազմավարական հիմնական ուղղությունները

Ռազմավարական ուղղություն 1.

Կանխարգելում

44. Հայաստանի ԳԱԾ-ում կանխարգելման քաղաքականությունն ուղղված է հակամարտությունների արմատական պատճառները բացահայտելուն, կանանց նկատմամբ բռնությունը կանխելուն և կայուն խաղաղություն հաստատելուն:
45. Այս քաղաքականությունն ընդգրկում է լայնածավալ նախաձեռնություններ, այդ թվում՝ վաղ նախազգուշացման համակարգերի մշակում, գենդերային զգայուն միջնորդություն, գենդերային բռնության դեմ պայքարի ծրագրեր, սոցիալ-տնտեսական անհավասարությունների հաղթահարում և օրինականության ու իրավական պաշտպանության ամրապնդում:
46. ԳԱԾ-ը նաև ներառում է անվտանգության վերաբերյալ համապարփակ կրթական ծրագրեր՝ հնարավոր հակամարտությունների ժամանակ հրատապ կարիքները հաղթահարելու համար: ԿԽԱ-ի օրակարգի արդյունավետությունն ապահովելու համար կարևոր է հաշվի առնել գենդերային հեռանկարները հակամարտությունների կանխարգելման բոլոր մակարդակներում և առաջնահերթություն տալ կանանց ակտիվ մասնակցությանը խաղաղության և անվտանգության հարցերում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարդկային անվտանգության ծրագրերի բարելավմանը: Ընդգծվում է ծրագրերում տղամարդկանց/տղաների մասնակցության կարևորությունը:

Ռազմավարական ուղղություն 2.

Մասնակցություն

47. Երրորդ ԳԱԾ-ն առաջարկում է մի շարք ծրագրերի իրականացում, որոնք էլ ավելի կընդլայնեն կանանց մասնակցությունը քաղաքականության մշակման բոլոր ոլորտներում: Դա հնարավորություն կտա իրականացնել առավել թիրախային քաղաքականություն, հաշվի առնել բնակչության տարբեր շերտերի կարիքները և ապահովել կայուն զարգացման նպատակները:

Ծրագիրը հիմնված է այն մոտեցման վրա, որ կանանց հավասար մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացներում հնարավորություն է տալիս ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները, բարելավել կառավարման համակարգը և նպաստել արդար և հավասար հասարակության ձևավորմանը:

Ռազմավարական ուղղություն 3.

Պաշտպանություն

48. Կանանց և աղջիկների պաշտպանության հարցը հիմնարար նշանակություն ունի կայուն, ներառական և խաղաղ հասարակություն կառուցելու համար: Երրորդ ԳԱԾ-ի շրջանակներում Հայաստանը կարևոր է համարում պաշտպանության քաղաքականությունը, հատկապես հակամարտությունների և հետհակամարտային իրավիճակներում կանանց իրավունքները, անվտանգությունը և արժանապատվությունը պաշտպանելու տեսանկյունից, այդ թվում նաև ամրապնդելով մարդկային անվտանգությունը:
49. ԳԱԾ-ի պաշտպանության քաղաքականությունը վերաբերում է ինչպես հրատապ անվտանգային խնդիրներին, այնպես էլ կանանց երկարաժամկետ առաջխաղացմանը՝ ապահովելով, որ կանայք և աղջիկները ոչ միայն գերծ մասն բռնությունից, այլև ներդրում ունենան խաղաղության կառուցման և կառավարման գործում: Այս քաղաքականությունը ներառում է համապարփակ իրավական շրջանակ, անվտանգային բարեփոխումներ և ապահովում է ծառայություններ հակամարտությունից տուժածներին, հաշվի առնելով գենդերային բաղադրիչը: Թե՛ գենդերային զգայուն անվտանգային բարեփոխումները, և թե՛ համայնքակենտրոն մոտեցումները՝ նպատակ ունեն ապահովելու տեական խաղաղություն և անվտանգություն:
50. ԳԱԾ-ի հիմնական առաջնահերթություններից մեկն է բարելավված օրենքների ընդունումը և դրանց համահունչ անհրաժեշտ մեխանիզմների ստեղծումը կամ լավարկումը նպատակ ունենալով կանխելու սեռական, գենդերային ու ցանկացած այլ հիմքերով բռնության բոլոր ձևերը:

Ներառված հիմնական միջոցառումներն են.

- Իրավաբանական օգնության և ծառայությունների տրամադրում տուժածներին՝ արդարադատության հասանելիության ապահովում և սպառնալիքներից պաշտպանություն:
- Իրավական պաշտպանության ամրապնդում, ներառյալ սեռով պայմանավորված բռնության և մարդկանց թրաֆիքինգի համար ավելի խիստ պատիժների սահմանում:
- Չոհակենտրոն արդարադատության մեխանիզմների ամրապնդում:
- Մարդու անվտանգության բարձրացում:

51. ԳԱԾ-ը նաև ընդգծում է խաղաղապահ ուժերի, ոստիկանության և զինվորական անձնակազմի, ինչպես նաև սահմանապահների համար վերապատրաստման ծրագրերի շարունակության ապահովման անհրաժեշտությունը: Այս ծրագրերը ներառում են մեթոդներ՝ սեռական և գենդերային հիմքով բռնությունը կանխելու, վերապրածների հետ աշխատելու և ռիսկային խմբերի բնակչությանը տարբեր վտանգներից, այդ թվում՝ թրաֆիքինգից պաշտպանելու վերաբերյալ:
52. Բացի այդ ԳԱԾ-ն պաշտպանում է կանանց և աղջիկների համար անվտանգ միջավայրի ստեղծումը, հատկապես տեղահանվածների համար, առաջարկելով նաև համայնքային պաշտպանական մեխանիզմների ներդրումը՝ մշտադիտարկման և սպառնալիքներին արագ արձագանքելու նպատակով:

Ռազմավարական ուղղություն 4.

Օժանդակություն, արձագանք և վերականգնում

53. Հայաստանը կարևորում է օժանդակության, արձագանքման և վերականգնման ծրագրերը, հաշվի առնելով կանանց և աղջիկների հատուկ կարիքներն ու իրավունքները հումանիտար ճգնաժամերի և հետհակամարտային վերականգնման ժամանակ:
54. Այս քաղաքականությունը հիմնված է գենդերային զգայուն մոտեցումների վրա, ընդգծում է կանանց առաջնորդությունը և խթանում կանանց և աղջիկների տնտեսական, սոցիալական և քաղաքական հզորացումը:
55. Երրորդ ԳԱԾ-ի միջոցով Հայաստանը նախատեսում է մշակել ծրագրեր, որոնք հաշվի կառնեն բռնի տեղահանված կանանց և աղջիկների հատուկ կարիքները: Անդրադառնալով գենդերային մարտահրավերներին և օգտագործելով կանանց կարողությունները

օգնության և վերականգնման աշխատանքներում, պետությունը ձգտում է խթանել ավելի ճկուն, ներառական և տևական խաղաղությունն ու կայուն զարգացման հաստատումը:

56. Ի հավելումն, պաշտպանություն հիմնասյան ներքո իրականացվող ծրագրերի, հատվածը ներառում է թրաֆիքինգի կանխարգելման, թրաֆիքինգի զոհերին աջակցության ցուցաբերման և թրաֆիքինգ իրականացնողների արդյունավետ քրեական հետապնդում ապահովելու միջոցառումներ: Այս գործողությունները կարևոր են, քանի որ հակամարտությունները և տեղահանությունը էականորեն մեծացնում են թրաֆիքինգի ենթարկվելու վտանգը:

Ռազմավարական ուղղություն 5.

Համագործակցություն

57. ԳԱԾ-ն նախատեսում է համագործակցության համապարփակ, բազմամակարդակ մոտեցում՝ ուղղված կայուն խաղաղության ամուրի հիմքերի ստեղծմանը: Ծրագիրն առաջնային է դարձնում համատեղ գործողությունները հետևյալ բնագավառներում.

1. Միջազգային համագործակցություն

Միջազգային կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների և տարածաշրջանային գործընկերների հետ համագործակցության ամրապնդում համատեղ նախաձեռնությունների մշակման, տարածաշրջանային գործողությունների ծրագրերի ստեղծման, փորձի փոխանակման և համատեղ կրթական ծրագրերի իրականացման միջոցով:

1. Տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցություն

Հայաստանի ողջ տարածքով տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության խորացում և տեղական գործողությունների ծրագրերի (ՏԳԾ) մշակման և իրականացմանն ուղղված ջանքերի ընդլայնում:

1. **Պետական մակարդակով համակարգումը** թույլ է տալիս «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» միջգերատեսչական հանձնաժողովի կողմից կանանց և երեխաների իրավունքների, և ավելի լայն իմաստով նաև մարդու իրավունքների պաշտպանության ապահովումը:

1. Քաղաքացիական հասարակության ներգրավում

Քաղաքացիական հասարակության և ոչ կառավարական

կազմակերպությունների, կանանց խմբերի և համայնքային դերակատարների բովանդակային ներգրավվածություն՝ խթանելու խաղաղության հաստատմանն ուղղված համայնքահեն ջանքերը:

Այս ռազմավարական համագործակցությունների միջոցով Երրորդ ԳԱԾ-ը նպատակ ունի ստեղծել միասնական և կայուն շրջանակ խաղաղության և զարգացման համար:

1. Հաջողված պրակտիկայի շարունակականության ապահովում

58. Երրորդ ԳԱԾ-ն հիմնված է նախորդ ԳԱԾ-երի իրականացման ընթացքում հանդիպած խոչընդոտների, ԳԱԾ-երի մշտադիտարկման ու գնահատման վերլուծության վրա և ընդգծում է դրական ձեռքբերումները, որոնք տեղի են ունեցել ԿԽԱ-ի երկու նախորդ ԳԱԾ-րի իրականացման ընթացքում:
59. ԿԽԱ գործընթացների շարունակականության ապահովումը պահանջում է բազմակողմ մոտեցում, որը ենթադրում է ԿԽԱ-ի սկզբունքների ինտեգրում իրավական, քաղաքական և ինստիտուցիոնալ շրջանակներին, ֆինանսավորման ապահովում, նպաստում է կարողությունների զարգացմանը և փոփոխվող պայմաններին հարմարվողականությանը:
60. Ինստիտուցիոնալացնելով ԿԽԱ օրակարգը, խթանելով գործընկերությունը, մշտադիտարկելով առաջընթացը և օգտագործելով նոր տեխնոլոգիաները՝ Հայաստանը կարող է ստեղծել կայուն, ճկուն և ներառական մոտեցումներ խաղաղության և անվտանգության վերաբերյալ, որոնք առաջնահերթ են դարձնում կանանց ներգրավումն ու պաշտպանում վերջիններիս իրավունքները:

1. Միջոլորտային մոտեցում

61. ԿԽԱ շրջանակում միջոլորտայնությանը անդրադառնալով Հայաստանը հաշվի է առնում և ակտիվորեն արձագանքում է կանանց և աղջիկների խտրականության տարբեր փորձառություններին և ձևերին: Միջոլորտային մոտեցման ներմուծմամբ՝ Հայաստանը իրականացվող ծրագրերը դարձնում է ավելի ներառական, հավասարաչափ և արդյունավետ: Դա ներառում է խոցելի խմբերի յուրահատուկ կարիքների ճանաչումը, նրանց մասնակցության ապահովումը, տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, ինչպես նաև ծառայությունների հարմարվողականությունը: Այս գործնական ռազմավարություններով ԿԽԱ նախաձեռնությունները կարող են առավել լավ պաշտպանել կանանց՝ ստեղծելով ավելի արդար և կայուն խաղաղության և անվտանգության օրակարգ:

62. ԿԽԱ միջգերատեսչական հանձնաժողովի համագործակցությունը մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ուղղությամբ գործող այլ միջգերատեսչական հանձնաժողովների հետ, այդ թվում Կանանց և տղամարդկանց միջև հավասարության, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի խորհրդի, Երեխաների իրավունքների հանձնաժողովի և այլն, կարևոր է համապարփակ մոտեցման և կանանց խոցելիության արմատական պատճառների վերաբերյալ ամբողջական պատկերացում ձևավորելու, դրանց լուծման համար համապարփակ միջոցներ մշակելու համար: 63. Միջուրտային համագործակցությունը կնպաստի կանանց իրավունքների պաշտպանության և մարդկային անվտանգության ամրապնդմանը: Այն ցույց կտա տարբեր գործոնների փոխհարաբերություններն ու փոխկապվածությունը՝ դիտարկելով իրավիճակը կամ խնդիրը որպես ամբողջություն, այլ ոչ թե կենտրոնանալով առանձին բաղադրիչների վրա: Այն կարտահայտի ավելի ընդհանրական պատկեր՝ հասկանալու միմյանց հետ փոխազդող տարբեր տարրերը, տարբեր որորտների միմյանց վրա ազդեցությունը, ինչը կհանգեցնի ավելի ամբողջական և կայուն արդյունքի հասնելու բազմաթիվ հեռանկարների և լուծումների: Համապարփակ և միջուրտային համագործակցությունը, որը հաշվի է առնում տեղական առանձնահատկությունները, առանցքային է բոլորի համար մարդկային անվտանգության առաջխաղացման հարցում:
63. Երրորդ ԳԱԾ-ում առաջնահերթ է համագործակցության ամրապնդումը տարբեր մակարդակներում՝ միջազգային հանրության և փորձագետների հետ, գիտելիքներ փոխանակելու և նոր փորձը ուսումնասիրելու համար, ինչպես նաև կարևորվում է համագործակցությունը սփյուռքում գործող ԿԽԱ օրակարգով աշխատանքներ իրականացնող կառույցների հետ: Հայաստանը նպատակ ունի ամրապնդել քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը ԳԱԾ-ի մշակման, իրականացման և մշտադիտարկման գործընթացում: Ռազմավարական այս ուղղությունը իրենից ներկայացնում է նախորդ ԳԱԾ-ների շրջանակներում ձևավորված համագործակցության ուժեղացում՝ հաշվի առնելով առկա իրականությունն ու դինամիկան:

- **Մարդկային անվտանգության խթանում**

65. Հայաստանը առաջնահերթություն է տալիս անձանց և համայնքների պաշտպանությանն ու ուժեղացմանը՝ կենտրոնանալով նրանց անվտանգության, արժանապատվության և բարեկեցության վրա: Ի տարբերություն ավանդական պետականակենտրոն անվտանգության մոտեցումների, մարդկային անվտանգությունը ներառում է մարդկանց կյանքին և բարեկեցությանը սպառնացող վտանգների ավելի լայն շրջանակ, ներառյալ տնտեսական անկայունությունը, առողջապահական ճգնաժամերը, շրջակա միջավայրի դեգրադացիան և անձնական անվտանգությունը:

Ամրապնդելով մարդկային անվտանգությունը ԿԽԱ-ի շրջանակներում՝ Հայաստանը նպատակ ունի իրականացնել համապարփակ միջոցառումներ, որոնք պաշտպանում են անհատներին տարբեր սպառնալիքներից՝ միաժամանակ անդրադառնալով հակամարտային և հետհակամարտային տարածքներում կանանց և աղջիկների առջև ծառացած մարտահրավերներին: Տնտեսական, պարենային, առողջապահական, բնապահպանական, անձնական, համայնքային և քաղաքական անվտանգության ոլորտներին վերաբերող ռազմավարությունները հնարավորություն կտան Հայաստանի ԿԽԱ նախաձեռնություններին ձևավորել ավելի ճկուն և կայուն հասարակություն, որտեղ առաջնահերթ են կանանց իրավունքները և բարեկեցությունը:

ԿԽԱ օրակարգում անդրադարձ կիբեր սպառնալիքներին

66. Երրորդ ԳԱԾ-ում ներառվել են կիբեր սպառնալիքներին ուղղված գործողություններ, որոնք կարևոր են, քանի որ թվային ոլորտն ավելի ու ավելի է միահյուսվում խաղաղության և անվտանգության խնդիրների հետ: Ատելության խոսքի տարածումը, կիբերսպառնալիքները, ներառյալ առցանց ոտնձգությունը, ապատեղեկատվությունը, տվյալների խեղաթուրումն ու թվային վերահսկողությունը, կիբերթրաֆիքինգը կարող են զգալիորեն ազդել կանանց անվտանգության վրա, խորացնել գենդերային անհավասարությունը և խաթարել խաղաղության կառուցմանն ուղղված ջանքերը: 67. Երրորդ ԳԱԾ-ում այս ռիսկերի ինտեգրումը կարևոր է թվային դարաշրջանում կանանց իրավունքները պաշտպանելու և նրանց բովանդակալից մասնակցությունը խաղաղության և անվտանգության գործընթացներին ապահովելու տեսակետից:
67. Ինտեգրելով կիբերանվտանգության միջոցառումները, բարձրացնելով թվային գրագիտությունը, պայքարելով առցանց բռնության դեմ և մշակելով գենդերային զգայուն կիբերքաղաքականություն՝ երրորդ ԳԱԾ-ն համահունչ է դարձնում իր գործողությունները 21-րդ դարի հակամարտությունների և անվտանգության առկա մարտահրավերներին: Թվային սպառնալիքների նկատմամբ ակտիվ մոտեցումը կուժեղացնի կանանց անվտանգությունը, կխթանի ներառական խաղաղության կառուցումը և կնպաստի հասարակությունների ընդհանուր դիմակայունությանը:

Կլիմայի փոփոխության և կենսաբազմազանության ապահովմանն ուղղված գործողությունների ամրապնդում

69. Երրորդ ԳԱԾ-ում ուժեղացնելով կլիմայի փոփոխություններին վերաբերվող գործողությունները Հայաստանը ճանաչում է գենդերային խնդիրների, հակամարտության և շրջակա միջավայրի հարցերի փոխկապակցվածությունը: Կլիմայական փոփոխությունները հատուկ մարտահրավերներ են ստեղծում, որոնք անհամաչափորեն ազդում են

կանանց և աղջիկների վրա՝ հատկապես պատերազմից կամ աղետներից տուժած, այն տարածքներում որտեղ ռեսուրսները և դիմակայման մեխանիզմները սահմանափակ են:

70. ՀՀ քրեական օրենսգրքի **154**-րդ հոդվածը ներմուծել է Էկոցիդ տերմինը, որը սահմանվում է որպես բուսական կամ կենդանական աշխարհի զանգվածային ոչնչացում, շրջակա միջավայրի, հողերի և ջրային ռեսուրսների թունավորում, ինչպես նաև Էկոլոգիական աղետ առաջացնող այլ գործողություններ:
71. Կլիմայի փոփոխության հիմնախնդիրների ինտեգրումը երրորդ ԳԱԾ-ում համապարփակ մոտեցում է ապահովում կանանց անվտանգության, նրանց դիմակայունության և խաղաղության, շրջակա միջավայրի հետ կապված որոշումների կայացման գործընթացներում մասնակցայնության բարձրացման հարցում:
72. 2024 թվականի հոկտեմբերին Հայաստանն ընտրվել է որպես Կենսաբանական բազմազանության մասին կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովի հյուրընկալող երկիր: Այս ընտրությունը վերահաստատում է միջազգային հանրության աճող վստահությունը Հայաստանի նկատմամբ՝ որպես գլոբալ բնապահպանական գործընթացների կարևոր դերակատարի: Հայաստանին այժմ վստահված է կենսաբանական բազմազանության կոնվենցիայի ներքո միջազգային ջանքերի մեկտեղման և առաջնության պատասխանատու աշխատանքը՝ նպաստելու մարդկության դեմ ծառացած ներկա բնապահպանական մարտահրավերների հաղթահարմանը: Կոնվենցիայի կողմերի 17-րդ համաժողովը (COP17) կայանալու է Երևանում 2026 թվականին:

• **ԿԻՍԱ օրակարգի ներդրումը ՀՀ այլ ծրագրերում և ռազմավարություններում**

73. Հայաստանը որդեգրել է ԿԻՍԱ թեման այլ ծրագրերի միջոցով խթանման քաղաքականությունը նպատակ ունենալով ինտեգրել ԿԻՍԱ սկզբունքները տարբեր ոլորտներում, որպեսզի ապահովվի համապարփակ մոտեցում գենդերային հավասարության, խաղաղության հաստատման և անվտանգության հարցերում: Սա ենթադրում է նաև ԿԻՍԱ նպատակների ինտեգրումը ավանդական խաղաղության և անվտանգության ոլորտներից դուրս՝ ավելի լայն ծրագրերում, ինչպիսիք են կայուն զարգացումը, հավասար ու որակյալ կրթական համակարգը, առողջապահությունը, կլիմայի փոփոխությունը և մարդասիրական գործունեությունը:

Այդ կերպով, երրորդ ԳԱԾ-ն դառնում է միավորող առաջնահերթություն, որը ազդեցություն է ունենում արդեն իսկ մշակված ու նոր մշակվելիք ռազմավարությունների վրա: ԳԱԾ-ն այլ ծրագրերի միջոցով խթանելն ապահովում է խաղաղության, անվտանգության և գենդերային հավասարության համապարփակ մոտեցում՝ ԿԻՍԱ սկզբունքները ներառելով տարբեր ոլորտներում: Այս ինտեգրումը բարձրացնում է նախաձեռնությունների

արդյունավետությունը, ապահովելով, որ խաղաղության և անվտանգության խթանման ջանքերը դառնան առավել ներառական և կայուն:

Այսպիսով, ԿԽԱ օրակարգի խթանումը ստեղծում է ավելի դիմացկուն և խաղաղ հասարակություն բոլորի համար:

1. Փոփոխության տեսություն

74. Երրորդ ԳԱԾ-ն կիրականացվի համակարգված, բազմաուղրտ մոտեցմամբ, որը կապահովի շահագրգիռ տարբեր կողմերի մասնակցությունը, ջանքերի համապատասխանեցումը ազգային առաջնահերթություններին և ԿԽԱ միջազգային չափանիշներին:
75. Այս բաժինը ներկայացնում է երրորդ ԳԱԾ-ի հաջող իրականացման հիմնական բաղադրիչները, շահագրգիռ կողմերի դերերը, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմները, կարողությունների զարգացման նախաձեռնությունները և ռեսուրսների բաշխման ռազմավարությունները: Երրորդ ԳԱԾ-ի նպատակն է ապահովել կայուն խաղաղություն, գենդերային հավասարություն և անվտանգություն՝ հզորացնելով կանանց դերը որպես առաջնորդներ, ապահովելով նրանց պաշտպանությունը և անդրադառնալով հակամարտությունների գենդերային ազդեցություններին: Այն նախատեսում է ապագա, որտեղ կանայք և աղջիկները ակտիվորեն մասնակցում են որոշումների կայացման գործընթացներին, օգտվում են ընդգրկուն անվտանգության շրջանակներից և պաշտպանված են բռնությունից և խտրականությունից՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:
76. Այս ազդեցությանը հասնելու համար ԳԱԾ-ը կենտրոնացել է չորս հիմնական նպատակների վրա: Առաջին՝ այն ձգտում է բարձրացնել կանանց առաջնորդությունը խաղաղության և անվտանգության հարցերում՝ ապահովելով նրանց հավասար մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին կառավարման բոլոր մակարդակներում: Երկրորդ՝ այն նպատակ ունի ուժեղացնել գենդերային բռնության դեմ պաշտպանության մեխանիզմները՝ ապահովելով, որպեսզի հակամարտությունից տուժած կանայք և աղջիկները ունենան արդարադատության և համապարփակ աջակցման ծառայությունների հասանելիություն: Երրորդ՝ ԳԱԾ-ն կհամակարգի գենդերազգայուն մոտեցումները խաղաղության կառուցման, հակամարտությունների կանխարգելման և հակամարտությունից հետո վերականգնման հարցում՝ անդրադառնալով կանանց և աղջիկների հատուկ կարիքներին և առաջնահերթություններին: Այն նպատակ ունի ամբողջական և

համապարփակ մոտեցմամբ անդրադարձ կատարել փախստականների և սահմանամերձ բնակավայրերից տեղահանված բնակչության խնդիրներին: Վերջապես, այն կարևորում է մշտադիտարկման և հաշվետվության մեխանիզմները՝ ծրագրերի իրականացման առաջընթացին հետևելու, բացերը հասցեագրելու և ԿԽԱ շրջանակում ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու համար:

77. Այս արդյունքներին հասնելու համար կիրականացվեն նպատակային քայլեր: Զաղաքականության և օրենսդրական բարեփոխումները կհամապատասխանեցվեն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 և այլ համապատասխան բանաձևերին: Կարողությունների զարգացման նախաձեռնությունների միջոցով հնարավոր կլինի վերապատրաստել պետական պաշտոնյաներին, անվտանգության ոլորտի աշխատողներին և քաղաքացիական հասարակության դերակատարներին՝ գենդերային հավասարության և ԿԽԱ սկզբունքների վերաբերյալ:
78. Տեղեկատվական քարոզչական արշավները մարտահրավեր կնետեն գենդերային վնասակար նորմերին և կխթանեն կանանց դերի կարևորությունը խաղաղության և անվտանգության ոլորտում: Չոհակենտրոն, վերապրածների կարիքների վրա հիմնված ծառայությունները այդ թվում՝ ապաստարանները, իրավաբանական, հոգեբանական և սոցիալական աջակցությունը, կնպաստեն գենդերային բռնության հետ կապված խնդիրների արձագանքմանը: ՀՀ-ում և Սփյուռքում ԿԽԱ օրակարգի շրջանակում աշխատանքներ տանող կառույցների համագործակցությունը կնպաստի արժեքավոր փորձի, ռեսուրսների ձեռքբերմանը և ԿԽԱ օրակարգի գլոբալ առաջնությանը: Բացի այդ, տվյալների հավաքագրման և հետազոտության համակարգերը կապահովեն ապացույցների վրա հիմնված քաղաքականություն և կփաստաթղթավորեն հակամարտությունների հետևանքները կանանց և աղջիկների վրա: Այս փոփոխության տեսության հաջողությունը հիմնվում է մի շարք կարևոր հիմունքների վրա: Դրանց թվում են՝ գենդերային հավասարության նկատմամբ կայուն քաղաքական հանձնառությունը, իրականացման համար բավարար ֆինանսավորումը և մշտական համագործակցությունը՝ կառավարության, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների միջև: Չնայած հնարավոր մարտահրավերներին՝ ինչպիսիք են օրինակ կանանց առաջնորդության վերաբերյալ բացասական վերաբերմունքը կամ աշխարհաքաղաքական անկայունությունը, ԳԱԾ-ը կկիրառի հատուկ ռազմավարություններ՝ նմանատիպ ռիսկերը մեղմելու համար:

1. «Կենսունակ» և «Դինամիկ» փաստաթղթի շարունակականության ապահովում

2. ԳԱԾ երրորդ ծրագրի համատեքստում «կենսունակ փաստաթղթի» գաղափարը կարևոր է: Երկրորդ ԳԱԾ-ում ներմուծված այս մոտեցումը թույլ է տվել ժամանակին արձագանքել սահմանամերձ շրջաններից և Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված կանանց կարիքներին:

«Կենսունակ փաստաթուղթը» շարունակաբար զարգացող փաստաթուղթ է,

որը մշտապես թարմացվում է, նկատի ունենալով փոփոխվող հանգամանքները, նոր բացահայտումներն ու քաղաճ դասերը:

80. Այս մոտեցումն ապահովում է ԳԱԾ-ի արդիականությունը, պատասխանատվությունն ու արդյունավետությունը՝ գենդերային հավասարության, կանանց իրավունքների, խաղաղության և անվտանգության առաջխաղացման մարտահրավերներին դիմամիկ արձագանքելու համար: Կենսունակ փաստաթղթի գաղափարը հատկապես կարևոր է ԿԽԱ ԳԱԾ-երի համար, քանի որ համատեքստերը, որոնցում դրանք իրականացվում են, հաճախ բարդ են և արագ փոփոխվող: Հակամարտությունների դիմամիկան, քաղաքական միջավայրը և կանանց ու աղջիկների կարիքներն ու առաջնահերթությունները ժամանակի ընթացքում կարող են զգալիորեն փոխվել: Ստատիկ ոչ զարգածող գործողությունների ծրագիրը կարող է արագ հնանալ կամ չլուծել

առաջացող խնդիրները: Այսպիսով, հարմարվելու և կատարելագործվելու ճկունությունը շատ կարևոր է:

Հավելված N 2

